«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Կրտսեր դպրոցական տարիքի երեխայի համակողմանի զարգացումն ուսման միջոցով

ԱՌԱՐԿԱ՝ «Մայրենի»

ՀԵՂԻՆԱԿ՝ Անահիտ Տեր-Սիմոնյան

ՄԱՐԶ՝ Արագածոտնի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Նիգավանի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….....2

Գրական ակնարկ…….....…...4

Գլուխ I. Խմբային աշխատանք.....6

1. Խմբային աշխատանքի իրականացումը ուսումնական
առարկայի ուսուցման գործընթացում.....6

2. Խմբերի ձևավորման սկզբունքներն ու եղանակները.....7

3. Խմբում ընդգրկված աշակերտների թիվն ու դերերի բաշխումը.....8

Գլուխ II. Երեխայի զարգացման գործընթացի ձևավորումը մայրենի
լեզվի դասերին.....9

Եզրակացություն.....14

Օգտագործված գրականություն.....16

Ներածություն

«Կրթության արմատները դառն են,
բայց պտուղը քաղցր է»
ԱՐԻՍՏՈՏԵԼ

Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներում հարմարվելու և ճկուն գործելու հմտություններ: Իսկ ի՞նչ դերակատարում է ունենալու կրտսեր դպրոցը:Ինչպիսի՞ն պետք է լինի դասի բովանդակությունը,որպեսզի ապագա քաղաքացուն լիարժեքորեն նախապատրաստի կյանքի ժամանակակից մարտահրավերներին և աշխատանքին:Այսօր անհրաժեշտություն է առաջացել ուսուցման գործընթացը կազմակերպել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և նոր մարդասիրական մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ: Այդ տեխնոլոգիաները պետք է կազմեն ուսուցչի գործունեության և ցանկացած դասի բաղադրիչները:Այդպես է հնարավոր նպաստել աշակերտի անձի զարգացմանը,դաստիարակությանը,նրա մտավոր աճին,գիտելիքների յուրացմանը և բարոյական հիմքերի ձևավորմանը:

Երեխայի համակողմանի զարգացման հիմքում ընկած է մարդասիրական դաստիարակության հիմնական սկզբունքները: Նրա անձի զարգացման սկզբունքների հիմնական դրույթները՝ կենսական ինքնորոշման, երեխայի կողմից սեփական ուժերի իրացման, հիմնական անձնային որակների, աշխարահայացների և ինքն իր նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձևավորման, սոցիալական ուղղվածության, կամայական վարքի զարգացման վերաբերյալ,կազմակերպվում են՝ հաշվի առնելով նրա տարիքային հոգեբանական առանձնահատկությունները:

Երեխայի բարոյական կերպարի ձևավորումը նրա զարգացման կարևոր ոլորտն է,որին պետք է հատուկ ուշադրություն դարձնել:

Այս տարիքի (6-10 տարեկան) երեխայի զարգացումն ընթանում է համաչափ: Շարունակում է զարգանալ երեխայի նյարդային համակարգը,գլխուղեղի կիսագնդերի գործառույթները:

6-10 տարեկան երեխաները ֆիզիոլոգիապես կարող են հաղթահարել ուսումնական գործընթացում առաջացող որոշակի գերլարում: Զննումից բացի ,նրանք կարողանում են ոչ միայն պարզապես դիտել,այլ բացահայտել առարկաների և երևույթների իրական ու ա-

ռաջնային հատկանիշները,վերլուծել դրանք, որոշ եզրահանգումներ անել:Դրանք բարձրակարգ մտածողության բաղադրիչներ են և նպաստելու են հետագա ուսումնական գործունեության արդյունավետությանը:

Կրտսեր դպրոցականներին հատուկ են՝ երևակայությունը, զարգանալուն միտված կապակցված խոսքը,ամրացող վարքի բարոյական հիմքերը,անմիջական ազդեցության տակ անհապաղ գործելու հակումը՝ իմպուլսիվությունը:

Ուսուցիչը,հաշվի առնելով աշակերտի անձնական առանձնահատկությունները,երեխայի բացառիկությունը, պետք է ձևավորի երեխայակենտրոն կրթադաստիարակ - չական արդյունավետ գործընթաց,որը հիմք է հանդիսանում պետության ապագա քաղաքացու ձևավորմանն ու դաստիարակությանը:

Ուսումնասիրությանս նպատակն է՝ բացահայտել ուսման պրոցեսում այն անհրաժեշտ գործողությունների ամբողջությունը,որոնք միտված են կրտսեր դպրոցականների համակողմանի զարգացմանը:

Գրական ակնարկ

Վաղ դպրոցական տարիքի դաստիարակություն և ուսուցում իրականացնելիս կարևոր է զարգացնել անձի այնպիսի որակներ,ինչպիսիք նրան պետք են ոչ միայն դպրոցական ուսումնառության ,այլև ամբողջ կյանքի ընթացքում և ունեն համա - մարդկային նշանակություն:Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է հասկանալ,որ այն երե- խան,որի կրտսեր դպրոցական կյանքում ստեղծված հնարավորությունները լիարժե - քորեն չեն իրացվել,միևնույնն է, նա կարող է հետագայում հասնել զարգացման բարձր մակարդակի այս կամ այն կրթական ոլորտում: Սակայն ապահովել նրա համակող - մանի զարգացումը,հավանաբար, արդեն հնարավոր չի լինի:Այդ տեսակետից դպրո- ցական ուսուցման համար անհրաժեշտ որակների ձևավորման առաջիկա խնդիրները չպետք է ստվեր գցեն հեռահար,սակայն հիմնարար այնպիսի արժեքների վրա,որոնք արդյունք են կրտսեր դպրոցականի բարոյահոգևոր զարգացմանը և կենսական իրավասության հիմքերի կառուցմանը միտված երեխայակենտրոն դաստիարա- կության:

Դաստիարակության և ուսուցման արդյունավետության գնահատման հարցում առաջնահերթ պետք է դառնան մարդասիրական արժեքների չափորոշիչ- ները: Դրանք ներառելու են նաև երեխայի, որպես անհատի , բարեկեցության և զարգացման չափորոշիչները:Խոսքը գնում է անհատի էկոլոգիայի մասին:Իսկ դա ենթադրում է երեխային տարբեր բարոյական մանկավարժական սխալներից պաշտպանելու, նրա լիարժեք կյանքի կայացմանը միտված իր իսկ կողմից ներ - դրվող ֆիզիկական,հոգեկան ու սոցիալական ներուժի իրացման և անհատական եսի դրսևորման համար պայմանների ստեղծում:Իսկ դա պահանջում է երեխայի «մարդկայնացում» , իրական կեցության համար հումանիզացիա , իր արժեքային համակարգի և հետաքննությունների նկատմամբ ուշադրության ուժեղացում:

Անընդհատ զարգացող հասարակության շարունակական զարգացումն ապա- հովող գործոններից մեկը բազմակողմանի զարգացած անհատն է,իսկ անհատի զար- գացումն ու ձևավորումն սկսվում է հանրակրթությունից:Հանրակրթության առաջին աստիճանից՝ տարրական դպրոցից է սկսվում անհատի զարգացումն ու ձևավո –

րումը՝ արդյունավետ ուսման և ճիշտ դաստիարակության միջոցով:Այդ իսկ պատճառով պետք է կարողանալ զարգացնել ուսման նկատմամբ կրտսեր դպրոցականի հետաքրքրասիրությունը,սովորեցնել նրան հասկանալ և լուծել առկա հիմնախնդիրը, որի արդյունքում զարգանում է երեխայի մտածողությունը:
(Գիտամեթոդական հանդես «Նախաշավիղ» 4. 2017թ., էջ 24)

Տարրական դպրոցն ավարտելիս սովորողը պետք է տիրապետի որոշակի գիտելիքների ու հմտությունների,նախապատրաստվի միջին դպրոցի ուսումնառությանը,որտեղ սովորողն արդեն շփվելու է ոչ թե մեկ կամ երկու ուսուցիչների հետ,այլ ըստ դասավանդվող առարկաների՝ մի քանի ուսուցիչների հետ: Միաժամանակ սովորողը պետք ունենա հոգևոր բարձր արժեքներ,սիրելու ,կարեկցելու մեծ ունակություններ:Հասնել այդ վերջնարդյունքին:Դա է լինելու տարրական դասարաննե - րում դասավանդող ուսուցչի նպատակը:

ԳԼՈՒԽ I

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Խմբային աշխատանքի իրականացումը ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում

Խմբային ուսուցումը ունի ծագում և անցել է մշակման երկար ճանապարհ: Այս մեթոդին հատուկ են մի շարք թերություններ: Խմբի որոշ անդամներ կարող են անգործության մատնվել և մնալ ստվերում:Նմանատիպ թերությունները լուծելու համար առաջ են քաշվել մի շարք առաջարկներ՝ մանկավարժական բազմաթիվ մեթոդական մշակումներ,նորարարություններ:Օրինակ՝ կարելի է հաշվի առնել,որ ցանկացած մարդկային գործընթաց հիմնված է փոխազդեցության վրա:Ուստի կարող ենք նկատել , որ հար - մարին կառուցվածքով փոխազդեցությունը կարող է ապահովել խմբային ուսուցման գործընթացի կազմակերպումը:Այս գործընթացի կառուցվածքային հիմքում ընկած է

«ուսուցիչ-աշակերտական խումբ» կառուցվածքը:Այս դեպքում ուսուցումը կազմակերպվում է ընդհանուր ճակատով, այսինքն աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրի լուծմամբ միևնույն ժամանակահատվածում: Որպեսզի որոշ պասիվներ չանտեսվեն,պետք է արդյունավետ փոխազդեցություն կազմակերպվի աշակերտների միջև:

Օգտագործելով խմբային և համախմբային քննարկումների տարբեր հնարքներ ու մեթոդներ, ապահովելով կարծիքների ձևավորման ,փոխանակման ընդհանուր մոտեցում՝ կօգնի հասնել մեր նպատակին:

2. Խմբերի ձևավորման սկզբունքներն ու եղանակները

Որպեսզի մանկավարժը դասարանում կարողանա ստեղծել հոգեբանական բարենպաստ մթնոլորտ,նա պետք է իմանա դրա բնութագրիչները, այն են.

1. Դասարանում սովորողների միջև առկա են աշխույժ,բարիդրացիական փոխհարաբերություններ,փոխհամագործակցություն:Նրանք հաճույքով են կատարում խմբային աշխատանքները: Հարաբերություններում գերակայում է խրախուսումը,իսկ քննադատությունը իրականացվում է նուրբ տոնով:
2. Դասարանում իշխում է հարգանքի մթնոլորտը և բոլորն իրենց պաշտպանված են զգում:
3. Դասարանում բարձր են գնահատվում անձի այնպիսի որակներ,ինչպիսիք են՝ աշխատասիրությունը,պատասխանատվությունը,արդարամտությունը:
4. Սովորողներն ակտիվ են և աշխույժ:

Խմբերի ձևավորման աշխատանքը կազմակերպելու համար պետք է նախապես պատրաստվել և հարմար է այդ գործընթացին ներգրավել աշակերտներին՝ նրանց հետ մշակելով խմբային կանոններ:Ցանկալի է,որ խմբում ընդգրկվեն չափորոշչային տարբեր մակարդակին համապատասխան սովորողներ: Ուսուցիչը ղեկավարում է խմբերի աշխատանքը.

- Խմբերին առաջադրանք տալ՝ միաժամանակ նշելով,որ յուրաքանչյուր աշակերտ պետք է մասնակցի խմբային քննարկմանը և հետագայում կարողանա պատասխանել հարցերին:

- Տրվում է ժամանակ առաջադրանքը կատարելու համար:Աշակերտներն աշխատում են խմբերով:
- Աշխատանքի ընթացքում ուսուցիչը հետևում և ուղղություն է տալիս, պատասխանում է որոշ աշակերտների հարցերի:
- Աշխատանքների ընթացքն ու արդյունքները քննում են միասին:Վերջում խմբի ավագը ներկայացնում է խմբի աշխատանքը՝ անելով շնորհանդես:

3. Խմբում ընդգրկված աշակերտների թիվն ու դերերի բաշխումը

Արդյունավետ է յուրաքանչյուր խմբում ընդգրկել 4 աշակերտ: Այս դեպքում յուրաքանչյուր անդամ կարող է ունենալ իր դերն ու ենթաառաջադրանքը:Նաև անհրաժեշ – տության դեպքում կարելի է բաժանել զույգերի:Խումբը նվազագույնը պետք բաղկացած լինի 3 հոգուց:Իսկ դրանից քիչը կհամարվի անհատական կամ աշխատանք զույգերով: Վեց անդամից բաղկացած խմբերը հակված են որոշ անդամներին անգործության կամ պասիվության մղելուն:Քանի որ խմբում ընդգրկել ենք ակադեմիական տարբեր ընդունակության տեր անդամներին,ուստի կատարում ենք դերերի բաշխում խմբում:Դրանով նաև բարձրացնում ենք աշակերտների պատասխանատվությունը:

Այսպիսով,աշակերտների զարգացման, արժեքային համակարգի ձևավորման և անհատականության վրա մեծապես ազդում է լավ կազմակերպած խմբային աշխատանքը:Ճիշտ կազմակերպված խմբային աշխատանքի արդյունքում սովորողի մոտ կձևավորվեն հետևյալ հետևյալ առանձնահատկությունները.

ա) միասին մտածելը,

բ) հարմարվելու ունակությունը,

գ) համագործակցությունը,

դ) այլոց նկատմամբ հարգանքը և հանդուրժողականությունը,

ե) խմբի մաս լինելու փորձը:

ԳԼՈՒԽ II

ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԴԱՍԻՆ

Տարրական դպրոցում է դրվում երեխայի կրթության, դաստիարակության և զարգացման հիմքերը: Այս գործընթացներին առավել շատ նպաստում են «Մայրենի» առարկայի ճիշտ կազմակերպված դասերը: Դասավանդման ընթացքում կիրառելով աշակերտի կրթությանն ու դաստիարակությանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ համոզվել, որ մեր փոքր դպրոցականներն էլ կարող են սովորել, դրսևորել դաստիարակված մարդու չափանիշներ և այդ չափանիշները դրսևորել շրջապատում: Դրսևորելու համար երեխաները պետք է զարգացնեն իրենց արտահայտվելու, առաջարկելու,նկատելու,կարծիք ձևավորելու հնարավորությունները: Մեր փոքրիկ սաները պետք է հասկանան մարդկային բարձր արժեքների իմաստն ու կարևորությունը և կարողանան դրանք դրսևորել շրջապատում:Նրանք պետք է ակտի վորեն մասնակցեն ուսումնական գործընթացին:Հարգանք դրսևորեն դիմացինի կարծիքի և նախասիրությունների հանդեպ: Պատրաստ լինել գնահատել և արժևորել ընկերների ,շրջապատող աշխարհի , հասարակության արժեքներն ու նորմերը: Դրսևորել ձեռք բերված այդ ուսուցված չափանիշները:

Որևէ առարկայի ծրագրով հնարավոր չէ մարդկային բոլոր արժեքների և ձեռքբերումների լիարժեք ուսուցում: Մենք ձգտում ենք տալ այն հիմնական գիտելիքներն ու հասկացությունները, որոնք պետք է երեխան ստանա այդ ուսումնական առարկայից: Ծրագրում տրված հիմնականը յուրացնելուց բացի պետք է երեխան ինքնուրույն կերպով շրջապատից,գրքերից,ընտանիքից ձեռք բերվածներով համալրի իր պաշար –

ները: Այս ամենին հասնելու կերպերից մեկն է ունկնդրման դասերի կազմակերպումը: Առանց ուրիշի օգնության գրքերի կարդալը, հեղինակի անունը ու վերնագիրն առանձնացնելը, նկարազարդումները դիտելը և դրանց հիման վրա որոշել գրքի թեման:

Դասերը կազմակերպելիս պետք է հաշվի առնել սովորողների պատրաստվածության մակարդակը,ծնողների սոցիալական վիճակը,ունեցած դիտակտիկ նյութերի,գրքերի պաշարը և երեխաների հետաքրքրության շրջանակը: Այս ամենը հաշվի առնելով ուսուցման լրացուցիչ ստեղծագործությունների ընտրությունը պետք է կատարվի հետևյալ պայմանների առկայությամբ՝

1. բնագրի ծավալը պետք է փոքր լինի՝ պարզ,մատչելի,գաղափարը՝ հասկանալի, թեման՝ հոգեհարազատ,
2. երեխայի ինքնուրույն ընթերցման համար ընտրված գրքերը իրենց ձևավորմամբ լինեն այնպիսին, որ նկարազարդումները հետաքրքրեն երեխաներին, հերոսների նկարները՝ տպավորվեն և մղեն հետևությունների:

Այնպիսի ինքնուրույն ընթերցանություն պետք է կազմակերպվի,որը կարողանա ընթերցասիրություն զարգացնի և ձևավորի ստեղծագործության գաղափարը հասկանալու և նպաստելու ստեղծագործության մեջ արժեքների հայտնաբերմանը,որն էլ կնպաստի նրանց բարձրարժեք որակների զարգացմանը ,գրագետ ընթերցողի և ընթերցելու պահանջմունք ունեցող քաղաքացու դաստիարակմանը:

Հաճախ աշակերտը հենց նոր կարդացած գրքից շատ քիչ բան է հասկացել:Այդ վատ ընկալունակությունը բացատրվում է այն պատճառով,որ չեն կենտրոնանում հիմնական մտքի վրա:Դաստիարակչական գործընթացը ապահովելու համար պետք է զարգացնել ընկալողականությունը և գնահատողականությունը զարգացնող մեթոդ - Օներն ու հնարները:Օգնել աշակերտներին խորհել կարդացածի մասին բարձրաձայն և արտա- հայտել սեփական կարծիքը կարդացածի մասին:

Ուսուցչի վարպետությունը արտահայտվում է նրանով,որ նա կարողանա դասերը դարձնել մեկը մյուսից տարբերվող,հետաքրքիր ու չկրկնվող : Չնայած երեխանեը ունեն տարբեր մտածական ունակություններ,ուսուցիչը պետք է կարողանա զարգացնել նրանց հետաքրքրասիրությունը ,միտքը,որպեսզի արդյունքում բոլորը լինեն սրամիտ ու դատող, խելացի ու ճշմարտախոս:Տվյալ դեպքում ուսուցիչը դառնում է

երեխաների համար փարոս :Միշտ ուսուցչի ցույց տված ճիշտ ուղիով շարժվող սովորողը հասնում է զարգացման մեծ հաջողությունների:

Տարրական դասարաններուն սովորողի տրմաբանական մտածողությունը կարելի զարգացնել ոչ միայն մաթեմատիկայի դասերին,այլ նաև մայրենիի դասերին:Ուսման ընթացքում ուսուցչի ուշադրության կենտրոնում պետք է լինի կրտսեր դպրոցականների մեջ խոսքի կուլտուրայի մշակումն ու զարգացումը,որով նրանք նախապատրաստվում են հետագա ուսումնառության:Այդ նպատակով է,որ մայրենիի դասերին երեխաները հիմնականում ուսումնասիրում են բանաստեղծու-թյուններ,հեքիաթներ,առակներ և պատմվածքներ,ինչպես նաև փորձում են գտնել առաջադրված հանելուկների պատասխանները:Ընդ որում, հանելուկները դասապրո-ցեսը դարձնում են ավելի հետաքրքիր:Նշված ստեղծագործությունների միջոցով կրտսեր դպրոցականները խորացնում են իրենց գիտելիքները հասարակության և շրջապատի մասին,բացահայտում են բնությունը:Երեխան պատմվածքի,առակի,հե-քիաթի ուսումնասիրման միջոցով սովորում է անցկացնել համեմատություններ,տար-բերել բարու և չարի կերպարները,բացահայտել դրական կերպարները և արտահայ-տել կարծիքներ: Այսպես, «Մայրենի 4» (հեղինակ՝ Դ.Գյուջինյան,1-ին մաս) դասագրքի «Լավ ընկերը» (էջ 4-8) թեման երեխային ընձեռնում է մտածելու,խորհելու և վերլուծե – լու հնարավորություն:Այն ունի դաստիարակչական մեծ նշանակություն:Երեխան հասկանում է՝ եթե լինել ընկեր,ապա՝ լավ ընկեր:Թեման հնարավորություն է տալիս երեխային վերլուծելու,վերհիշելու ,թե պատահել է իրեն հետ նման դեպք ,երբ չի օգնել նեղության մեջ գտնվողին:Այս թեմայի միջոցով ուսուցիչը կարողանում է նաև հարթել ներդասարանային հակասությունները,եթե դրանք կան:Երեխային զարգացնող ու դաստիարակող թեմայի օրինակ է նաև «Մայրենի 3» (հեղինակ՝ Վ.Սարգսյան,1-ին մաս) դասագրքի «Մայր սագի հեքիաթը» (էջ 24) թեման: Այս թեման զարգացնում է երեխայի մոտ սերը մեծի,հատկապես ծնողի նկատմամբ: Երեխան հասկանում է,թե ինչ փոխաբերական միտքը և կարողանում է գտնել այն:
(Գիտամեթոդական հանդես «Նախաշավիղ» 4. 2017թ., էջ 27)

Ուսումնասիրությամբ ես պարզեցի,որ երեխայի զարգացման գործընթացում մեծ նշանակություն ունի ուսուցչի դիրքը,նրա վարքագիծը,որոնք լրջորեն ազդում են

դասարանի ընդհանուր մթնոլորտի և ուսման նկատմամբ սովորողների վերաբերմունքի վրա:Այստեղ տեղին մեջբերել ռուս մանկավարժ Մակարենկոյի խոսքերն ուղղված ուսուցիչներին.«Պետք է կարողանալ ասել այնպես,որ երեխան զգա ձեր կամքը,ձեր կուլտուրան,ձեր անհատականությունը»:Ուսուցչի կողմից սովորողի հետ հաղոր - դակցման ձևերից կարելի է առանձնացնել երկուսը՝ «Դու» և «Ես»:«Դու» տեսանկյունով հաղորդակցման դեպքում կարծես ուսուցիչն անընդհատ դիտողություններ է անում («Դու նորից տնային աշխատանքդ չես կատարել»,«Դու միշտ խանգարում ես դասը», «Դու անկարգապահ ես» և այլն):Այս դեպքում ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ ուսուցիչը միշտ ճիշտ է,իսկ աշակերտը սխալ է ու զգում է իրեն վիրավորված:Ավելի արդյունավետ միջոց է «Ես» տեսանկյունով իրականացվող հաղորդակցումը:Այն ապահովում է լավ փոխհարաբերություն ուսուցչի և սովորողի միջև («Ես գիտեմ,որ դու ինքնուրույն ես գրել տնային աշխատանքը», «Ես կուզենայի,որ դու պատասխանեիր դասը» և այլն):Դրա համար անհրաժեշտ է,որ ուսուցիչը ճիշտ շփվի սովորողների հետ:Այն կարելի է իրականացնել տարբեր միջոցներով՝ բանավոր խոսքով, տեսողական և շոշափելի շփումների միջոցով: Բանավոր շփումն իրականացվում է բառերի միջոցով,օրինակ՝ սովորողին իր անունով,նույնիսկ ազգանունով դիմելը:Իսկ տեսողական շփման ժամանակ ուսուցիչը հայացքով հաղորդում է իր համակրանքը, տրամադրությունը՝ ներկայացնելով իր պահանջները:Իզուր չէ,որ դասարան ուսուցչի մտնելու ժամանակ սովորողները կանգնում և ողջունում են ուսուցչին:Այդ ժամանակ բոլորի հայացքներն ուղղված են դեպի ուսուցիչը ,որը նպաստում է տեսողական հաղորդակցմանը:

Շատ կարևոր է նաև ուսուցչի կողմից երեխայի հույզերին հաղորդակցվելը:Դա իրականացնելու համար հարկավոր է ուսուցչի կողմից կատարել հետևյալ քայլերը՝

1. Նախ ցուցադրել սեփական զգացմունքները.այդ կերպ ուսուցիչն ազդում է աշակերտների ինքնազգացողության վրա և , ի պատասխան՝ ստանում է նույն արձագանքը:
2. Լսել և լինել անկեղծ երեխայի արտահայտած մտքերի նկատմամբ:Տալ նպատակային հարցեր:Լսել երեխային չի նշանակում ընկալել միայն երեխայի հայտնած տեղեկատ - վությունը,այլ ընդունել նրան հուզող խնդիրները,ապրումները,հասկանալ նրա ուրախության, վախի,հրճվանքի և հիասթափության պատճառները:

3. Կարևոր հանգամանք է նաև այն,թե ուսուցիչը որքանով է ընկալում աշակերտներին հատուկ զգացմունքայնությունը:Դա երեխաներին հասկանալու չափն է: Ուսուցիչը երեխաներին պետք է ճանաչի,իմանա նրանց հնարավորությունները, հետաքրքրու - թյունները,ակտիվությունը ,ուժեղ և թույլ կողմերը:

4. Գնահատել և խրախուսել երեխային, հարգանքով վերաբերվել նրան:Ուսուցիչը կարող է դիմել սովորողին՝ օգնության խնդրանքով և դրանով թե իրեն,թե սովորողին կմղի կարևորել դիմացինի գիտելիքները: Այդ ժամանակ անհրաժեշտ է,որ ուսուցիչը պահպանի հետևալ պայմանները.

ա) խնդրանքը լինի երեխայի հնարավորությունների սահմաններում,

բ) այն պարտադիր պետք է իրականցվի,

գ) պետք է դիմել բարեկիրթ ձևով:

Այստեղ մեծ նշանակություն ունի նաև գնահատականը:Հաճախ մոռանում ենք այնպիսի գնահատման մասին,ինչպիսին է խրախուսումը:Գնահատելով երեխային պետք բարձ- րացնել թե կոլեկտիվի առջև,թե իր աչքին:Անհրաժեշտ է, որ ամեն մի երեխա զգա իր առաջընթացը:Նույնիսկ մեկանգամյա խրախուսումը կարող է այնքան ազդել երեխայի հոգեբանական ինքնազգացողության վրա, որ հնարավոր է՝ կտրուկ փոխվեն նրա գործունեության ոճը,ռիթմը, շրջապատող մարդկանց հետ փոխհարաբերությունները:

(Գիտամեթոդական հանդես «Նախաշավիղ» 4. 2013թ., էջ 10)

Եթե դասապրոցեսում գիտելիքների ձեռքբերումը եռամակարդակ է, ապա դաս - տիարակության հարցում պատկերն այլ է:Անձնային լավ որակներ կարող են բոլորն ունենալ՝ անկախ ուսման առաջադիմությունից և գիտելիքների կարողությունների ու հմտությունների ձեռքբերման աստիճանից:Անգամ թույլ կարողություններով օժտված երեխան պետք է զգա ,որ ինքը կարևոր դեր ունի դասարանում:Անտեսված աշակերտը մեծանում է արժևորվելու մշտական կարիքով:Չի կարելի նման աշակերտներին դասա - րանի կողմից մերժված համարել: Միշտ էլ հնարավոր է հիմք ընդունել նրա մեկ ուրիշ արժանիք,հմտություն կամ բարոյական կողմ:

Եզրակացություն

Կրտսեր դպրոցական տարիքի երեխայի զարգացման,կրթության և դաստիա - րակության հիմքում ընկած է երեխայի տարիքային հոգեբանական և ընկալման ա- ռանձնահատկությունը: Երեխայի արժեհամակարգը ձևավորելու համար ուսուցիչը պետք է հաշվի առնի այն բոլոր հանգամանքները,որոնք կարող են խթան հանդիսա- նալ արժեհամակարգի ձևավորման գործընթացում:Երեխային դիտել որպես անհատ, ով ունի սեփական տեսակետը,արտահայտվելու և դրսևորվելու ունակություններ:Պետք է գնահատել և զարգացնել այն արժեքները, որոնք կնպաստեն երեխայի անձի զարգացման գործընթացին: Հարկավոր է ուսուցման ընթացքում ապահովել այն, թեկուզ ամենափոքր, չափորոշչային գիտելիքները, որոնք սահմանված են:

Անհրաժեշտ է ուսման ընթացքում ապահովել այնպիսի միջավայր,որում երեխան իրեն հարմարավետ կզգա՝ ազատ, համագործակցող, ինքնատիրապետող, ստեղծագործող: Երեխան պետք է իրեն զգա դասարանի լիարժեք անդամ՝ անկախ ազգային, կրոնական,սեռային, սոցիալական վիճակից:Հավասարապես ընդգրկվի ուսման բոլոր պրոցեսներում և ունենա իր իրավունքներից օգտվելու բոլոր հնարավորություն- ները:Միայն ճիշտ հոգեբանադաստիարակչական մանկավարժական ճիշտ աշխատանքի դեպքում է հնարավոր կերտել ապագա հասարակության լիիրավ և կայացած անդամ: Ուսուցիչն իր կոչմանը կարող է արժանանալ այն դեպքում,երբ նա, հենվելով ընդունված բարոյահոգեբանական,մանկավարժական նորմերի վրա,իր կողմից ներդնում է մեծ ջան- քեր, նոր մեթոդներ ու միջոցներ է կիրառում դասապրոցեսն ավելի սահուն,ընգրկուն և հետաքրքիր անցկացնելու համար:

Ուսումնասիրությամբ պարզեցի նաև,որ սովորողների,հատկապես՝ կրտսեր դպրոցականների, մտածողության զարգացման վրա մեծ ազդեցություն է ունենում նրանց ճիշտ հարցադրումներ ուղղելը: Հարցադրմանը պետք է հաջորդի ուսուցչի կող- մից սովորողին ուղղորդելը՝ տրամաբանելու և գտնելու հարցի պատասխանը:

Եզրահանգեցի,որ ուսման միջոցով կրտսեր դպրոցականի համակողմանի զար – գացումն ապահովելու համար անհրաժեշտ է՝

- տարրական դասարաններում մանկավարժական աշխատանքների ճիշտ կազմակերպում՝ հաշվի առնելով կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները,

- ավելացնել խմբային աշխատանքների քանակը,
- ամենից շատ ոգևորել այն սովորողներին,ովքեր իրենց ընկերների կողմից ավելի քիչ են ուշադրության արժանանում,
- խթանել միասնականությունը և ընդգծված հավանություն տալ այն աշակերտ-ներին,ովքեր պատաստակամ օգնում են ընկերներին,
- խրախուսել աշխույժ քննարկումները և հնարավորություն ստեղծել,որպեսզի բոլոր սովորողները մասնակցեն դրան,
- չսահմանափակել և չճնշել երեխայի երևակայությունը,
- կիրառել խրախուսանքի տարբեր ձևեր,
- հասկացնել,որ նախ պետք է լինել ինքնաքննադատող,հետո՝ քննադատող:

Ավարտում եմ աշխատանքս այն համոզմամբ,որ արդի ժամանակաշրջանի ոչ մի տեղեկատվական աղբյուր չի կարող աշակերտին տալ հոգևոր այն սնունդը,ինչը որ տալիս է ուսուցիչը,որովհետև միայն այս դեպքում է մատուցման մեջ խորապես ներթափանցված սերը:Այդ իսկ պատճառով հենց ուսուցիչը պետք է ձգտի տարբեր մեթոդներով,միջոցներով ու եղանակներով երեխաների համար դասը դարձնել առա-վել հետաքրքրաշարժ և ,որ ամենակարևորն է, արդյունավետ:

Օգտագործված գրականություն

1. Գիտամեթոդական հանդես «Նախաշավիղ» (4. 2013թ.,)
2. Գիտամեթոդական հանդես «Նախաշավիղ» (1.2014թ,)
3. Գիտամեթոդական հանդես «Նախաշավիղ» (4. 2017թ.)
4. Մայրենի (3-րդ դաս.դասագիրք,Վ. Սարգսյան)
5. Մայրենի (4-րդ դաս.դասագիրք,Դ.Գյուրջինյան)